ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա – Կերպարվեստ

Թեմա – Նատյուրմորտ

Հետազոտող – Աստղիկ Փարեմուզյան (Ա.Ս. Պուշկինի անվան հմ. 8 հիմնական դպրոց)

Ղեկավար – Լիլիթ Իսկոյան

ԵՐԵՎԱՆ 2022

Պլան

Ներածություն..... 3

Նատյուրմորտ..... 4

Եզրակացություն..... 14

Օգտագործված գրականության ցանկ..... 16

Ներածություն

(ֆր. nature morte- մեռած բնություն), կերպարվեստի ժանր, հիմնականում հաստոցային գեղանկարում, որտեղ պատկերվում է անշարժ, անշունչ առարկաներ՝ սովորաբար տնային կահկարասի, մրգեր, ծաղիկներ, ձկներ, խփված վայրի թռչուններ, որևէ մասնագիտության պիտույքներ։

Նատյուրմորտի մոտիվները որպես մանրամասներ գոյություն են ունեցել դեռևս հին արևելյան, անտիկ, միջնադարյան, հին չինական և ճապոնական արվեստներում։

Նատյուրմորտը որպես ինքնուրույն ժանր սկզբնավորվել է նոր ժամանակի եվրոպական արվեստի կազմավորման զուգընթաց՝ հաստոցային նկարչության առանձնացումով և ժանրերի ճյուղավորված համակարգի առաջացումով։

Արդեն Վերածննդի շրջանի իտալական և նիդեռլանդական վարպետների աշխատանքներում մեծ ուշադրություն է դարձվել նյութական աշխարհի իրերի կոնկրետ- զգայական գեղեցկություններին։

Նատյուրմորտի պատմությունը, որպես հաստոցային գեղանկարչության ժանր և նրա խաբկանք (trompe-l'oeil) տիպը սկզբնավորվել է իտալացի գեղանկարիչ Յակոպո դե Բարբարիի «Նատյուրմորտ» աշխատանքով(1504 թ.), սակայն նատյուրմորտի ժանրը մեծ տարածում է գտել միա՛յն 16- րդ դարի երկրորդ կեսից և 17- րդ դարի սկզբից նիդեռլանդացի Պիտեր Արտսենի և նրա հետևորդների նկարներում։ Մեծ տեղ է հատկացված ուտեստներով, կահ-կարասիով ծանրաբեռնված խոհանոցների և կրպակների պատկերներին։ Նատյուրմորտը ծաղկում է ապրում Իտալիայում, նրա կազմավորմանը մեծապես նպաստել է Կարավաջիոյի նորարական բարեփոխումները, որոնք նկարիչների ուշադրությունը սևեռել են հասարակ «ցածր» մոտիվների վրա։ Իտալական նատյուրմորտը աչքի է ընկնում հորինվածքի բազմազանությամբ, վառ և հագեցած գույներով։

Նատյուրմորտ

Կերպարվեստային գործունեությունը դպրոցականների գեղարվեստական դաստիարակության կարևորագույն միջոցներից է: Կոմենսկին գտնում էր. “Կերպարվեստային գործունեությունը հնարավորություն է տալիս զարգացնելու գեղեցիկի զգացողությունը՝ տեսնելու, զգալու, հիանալու բնության գեղեցկությամբ և արվեստի ստեղծագործություններով”: Կերպարվեստային գործունեության տարբեր ձևերի՝ պարապմունքների, զրույցների, էքսկուրսիաների կազմակերպմամբ համակարգվում և ընդլայնվում են երեխաների ձեռք բերած գիտելիքները գեղանկարչական, գրաֆիկական և դեկորատիվ կիրառական արվեստի վերաբերյալ: Կերպարվեստի դասերը ունեն ճանաչողական և ուսուցողական նշանակություն: Դասապրոցեսը հնարավորություն է տալիս երեխաներին՝ ծանոթանալու պարզագույն նյութերի տեսակներին և դրանց հատկություններին: Ուսուցիչը պետք է բացատրի և ցուցադրի ուսուցանվող նյութը, հետևի, որ երեխաները լսեն ու ճիշտ կատարեն հրահանգները: Կերպարվեստային գործունեության ընթացքում զարգանում են երեխայի ստեղծագործական, կառուցողական, գեղագիտական ունակությունները, ինչպես նաև լուծվում են հետևյալ կարևորագույն խնդիրները.

- Երեխաները սովորում են զգալ, տեսնել, դիտել շրջապատող աշխարհը:
- Հարստանում է զգայական փորձը, տեսողական, լսողական, հոտի, շոշափե- լիքի զգացողությունը:
- Կարողանում են առարկաները տեսնել և բնութագրել ըստ գույնի, ձևի, չափի և տարածության մեջ:
- Սովորում են նկարելով բացահայտել առարկաների հարաբերությունները միմյանց նկատմամբ. ծանոթանում են ***լայնություն, բարձրություն, մեծություն*** հասկացություններին:
- Զարգանում է առարկաները և երևույթները տեսնելու, դիտելու, համեմատություններ և վերլուծություններ կատարելու, դրանց նմանություններն ու տարբերությունները գտնելու, ընդհանրացումներ անելու ունակությունը:
- Հարստանում է երեխայի ստեղծագործական երևակայությունը, հղկվում է գեղագիտական ճաշակը:

Կերպարվեստային գործունեության, ստեղծագործական և գեղարվեստական կարողությունների զարգացման ժամանակաշրջանը դպրոցական տարիքն է: Փոքրիկն անընդհատ ձգտում է դեպի գեղեցիկ, վառ, գունեղ, պայծառ խաղալիքներն ու առարկաները, որոնք նրան

հետաքրքրում և հաճույք են պատճառում: Տարիքի աճմանը զուգընթաց աստիճանաբար մեծանում է հետաքրքրասիրությունը դրանց նկատմամբ: Զարգանում են երեխայի ուշադրությունը, դիտողականությունը. նա արտահայտում է մտքեր և վերաբերմունք՝ տեսածի, լսածի ու զգացածի մասին: Բնության հետ առնչվելիս երեխան աստիճանաբար տարբերում է հիմնական գուներանգները՝ կարմիրը, կապույտը, դեղինը, կանաչը և այլն: Սկզբնական շրջանում փոքրիկները հմտանում են ձեռքի, մատների տարբեր դիրքերով հարվածների կատարման մեջ, ինչպես նաև չափերի, տեսակների ու ձևերի տարբերակման մեջ: Դրանք հետագայում կծառայեն որպես նկարի պարզագույն տարրեր: Նրանց կարելի է առաջարկել նկարել ծաղիկ, ցողուն, մեծ և փոքր աղեղիկներ, տանել ուղիղ ու ալիքաձև գծեր, կորագծեր: Այդ գործողությունները կնպաստեն ձեռքերի համաչափ շարժումների զարգացմանը: Աստիճանաբար գույների, գծիկների և վրձնահարվածների միջոցով կարելի է պատկերել առարկաներ և շրջապատի երևույթներ: Այդ աշխատանքները պետք է զուգակցվեն խոսքի պատկերավորման միջոցների օգտագործման հետ. “Անձրև՝ կաթ-կաթ”, “Քայլում են սագիկները՝ տոպ-տոպ”: Նկարել կարելի է տարբեր միջոցներով և տարբեր դիրքերով՝ հատակին պառկած, սեղանի տակ կամ սեղանի վրա, լրագրի, ափսեի, ծառի տերևի, գունավոր կամ սպիտակ թղթի վրա և այլն: Ձևերի և միջոցների բազմազանությունը նոր խնդիր է առաջ բերում և ստիպում փոքրիկներին անընդհատ ինչ-որ բան հորինել: Փորձելով սեփական զգացմունքները պատկերել թղթի վրա՝ երեխան սկսում է ավելի լավ հասկանալ մյուսների զգացմունքները: Նա սովորում է հաղթահարել վեհերոտությունը, նկարչության հանդեպ այն վախը, թե ոչինչ չի ստացվի: Ընդհակառակը, համոզվում է, որ կստացվի և գեղեցիկ կստացվի: Նկարչության բնագավառում առաջին քայլերը պետք է սկսել պարզ ձևերի պատկերմամբ: Հաջորդաբար կարելի է անցնել ավելի բարդ ձևերի՝ կիրառելով ավանդական և ոչ ավանդական մեթոդներ: Ոչ ավանդական մեթոդներով կարելի է ստանալ պատկերներ տարբեր արտահայտչամիջոցներով՝ գունավորած մատիկներով, ճմռթված թղթով, վրձնով, փրփրապլաստով, կարտոֆիլով, սպունգով, խցանով, տերևով, օճառի պղպջակներով և այլ միջոցներով: Մանրամասն ներկայացնենք մատնանկարչությունը՝ որպես ոչ ավանդական մեթոդով նկարչության տեսակ: Սպիտակ թղթի վրա գունաներկված ձեռքերի, մատների, ափի միջոցով կատարվող նկարչությունն ընդունված է անվանել մատնանկարչություն: Այս տիպի նկարչությամբ զբաղվելու ընթացքում ակտիվ են երեխայի երկու ձեռքերը: Նա կարող է նկարել աջ կամ ձախ ձեռքով, երկու ձեռքով, ձեռքի ափերով, մատներով: Աշխատաձևի այս տեսակի նպատակն է՝ զարգացնել հետաքրքրասիրություն մատիկների և ներկերի միջոցով ստեղծվող պատկերների նկատմամբ: Ձեռքերով, մատիկներով, ափի միջոցով նկարելը կարելի է համարել նկարչության

այլընտրանքային ձևերից մեկը, որի շնորհիվ կարելի է յուրովի վերարտադրել առարկաների, երևույթների պատկերները՝ գործի դնելով վառ երևակայությունը: Ինչո՞ւ գունաներկված մատիկներով և ոչ թե՝ վրձնով: Ըստ հետազոտողների /Տ.Գ Կազակովա, Գ.Գ. Գրիգորևա/՝ ձեռքերով նկարելու գործելակերպը, ի տարբերություն վրձնով նկարելու, բազմաբովանդակ հնարավորություններ է ընձեռում երեխաներին: Գունաներկված մատիկներով նկարելու ընթացքում երեխան ապրում է մեծ ուրախություն, ցնծություն, հրճվանք: Նա լրիվ ազատ է իր շարժումների, ստացվող պատկերների, գծերի, հարվածների, ուղղությունների ընտրության մեջ՝ քան վրձնով աշխատելիս: Հետևաբար, երեխային դեռ վաղ տարիքից պետք է հնարավորություն տալ աշխատելու այսպիսի տեխնիկայով: Դա նպաստում է, որ երեխան շոշափի և ավելի լավ զգա ներկանյութը, դրա գույնը, փափկությունը: Երբեմն էլ փորձում է հոտ քաշել: Այս դեպքում ակտիվ վիճակում են նրա բոլոր զգայարանները, և դրանց շնորհիվ նա ծանոթանում ու ճանաչում է ներկանյութերի հատկություններին: Նկարելու մեթոդիկան Նկարչության գաղտնիքները բացահայտելու համար այդ ուղղությամբ տարվող աշխատանքները պետք է սկսել 2-3 տարեկանից: Սկզբում երեխան պետք է աշխատի վառ գույներով: Դա օգնում է նրան ուշադիր լինել շրջապատում գտնվող վառ, ուրախ, տաք գույներով առարկաների նկատմամբ: Նա ազատ է իր շարժումների մեջ: Առաջին 3 պարապմունքներին երեխան պետք է աշխատի գունավորած մատիկներով: Դա կարելի է համարել փորձնական խաղ-պարապմունք՝ գունաներկված մատիկներով: 3-5-րդ պարապմունքների ընթացքում երեխան արդեն իֆքնուրույն ընտրում է իրեն ծանոթ գույները /կարմիր, կապույտ, դեղին, ինչպես նաև կանաչ, նարնջագույն/ և մատներով նկարում: Սկզբնական շրջանում պարապմունքները պետք է կազմակերպել անհատապես: Երբ յուրաքանչյուր երեխա կտիրապետի այս աշխատաձևին, կարելի է կազմակերպել պարապմունքներ զույգերով, ապա՝ խմբերով: Դաստիարակը պետք է երեխաներին ցույց տա ներկից օգտվելու ճիշտ ձևը: Այն պետք է լինի ոչ մեծ քանակություն և զգուշությամբ դրվելու է թղթի վրա: Մի քանի գույն տեղադրելուց հետո երեխան գունավոր մատիկներով սպիտակ թղթի վրա կատարվում է զանազան շարժումներ՝ հարվածներ և տարբեր չափերի հպումներ: Իհարկե, այս ամենը պետք է ուղեկցվի դաստիարակի վերահսկուղությամբ: Երեխան կարող է աշխատել ինչպես աջ, այնպես էլ ձախ ձեռքով: Այս դեպքում դաստիարակը չպետք է միջամտի, այլ միայն ուղղորդելու է: Երեխան գունավորած մատիկներով սպիտակ թղթի վրա աշխատում է մեծ խանդավառությամբ, սիրով ու հաճույքով: Աշխատելու ընթացքում նա ճանաչում է գույները և իր համար բացահայտում դրանցով ստացվող նոր գուներանգները: Գործողությունների այս ձևը թույլ է տալիս՝

- արթնացնել երեխայի հետաքրքրությունը ստեղծվող պատկերների նկատմամբ,

- զարգացնել ձեռքի մանր մկանները,
- հղկել ձեռքի շարժումները:

Այս գործունեության նկատմամբ երեխաների անկեղծ ոգևորությունը և ակտիվությունը բացատրվում է այն հանգամանքով, որ փոքրիկը շարժողական ակտիվության մեծ պահանջ ունի: Այդ պատճառով էլ նա նկարում է հարվածներով, թռիչքներով: Նրանք կարող են նկարել աջից՝ ձախ, վերևից՝ ներքև, կենտրոնից՝ եզր, գծային և գունային խզբզանքներ անել, տանել ուղիղ գծեր: Նրանց դուր է գալիս մատների խաղը, շարժումները փափուկ ներկանյութի հետ: Աշխատելու ընթացքում երեխաները հայտնաբերում են, որ թուղթն ունի եզրեր, և չպետք է դուրս գալ այդ եզրերից: Հնարավոր է, որ լավ չներկեն, բաց թողնեն անկյունները, գծերը լինեն միայն ուղղահայաց կամ հորիզանական: Միևնույն է `աշխատելու ընթացքում երեխաներն ունենում են դրական հույզեր, իսկ աշխատանքի վերջում՝ բավարարված են զգում իրենց: Դա խիստ կարևոր հանգամանք է: Մատնանկարչության համար անհրաժեշտ են առանձնահատուկ պայմաններ և նյութեր.

- աշխատատեղ,
- աշխատանքային հագուստ /գոգնոց/,
- թուղթ տարբեր չափերի,
- խոնավ լաթեր,
- գունաներկեր:

Այսպիսի աշխատանքը կարող է տևել 3-4-ից մինչև 10-12րոպե: Երեխային հե- տաքրքրում են ոչ միայն աշխատանքի ընթացքը, այլև վերջնական տեսքը և դաստիարակի խրախուսական խոսքը: Սակայն ինչպիսին էլ լինի նկարը կամ ստացված պատկերը, միևնույն է, այն երեխայի զգայական ընկալման վերարտադրումն է, որն ուրախություն և հրճվանք է պարգևում հենց իրեն: Նա նույնիսկ մի քանի աշխա- տանքների մեջ առանձնացնում է իր աշխատանքը: Մատնանակարչության խաղ- պարապմունքների ընթացքում մեկ գույնով կարելի է պատկերել հետևյալ թեմաներով նկարներ.

- “Ուժեղ քամի”,
- “Անձրև”,
- “Հրաշք հարվածներ”,
- “Գեղեցիկ ծաղիկներ” և այլն : Երկու գույնով՝
- “Բազմազան նախշեր”,
- “Ուրախ տերևաթափ”,
- “Զարմանահրաշ անձրևներ” և այլն: Երեք և ավելի գույներով՝
- “Կախարդական գույներ”,

- “Հրաշագործ մատիկներ”,

“Բազմագույն գծեր” և այլն:

Գեղագիտական դաստիարակությունը հատուկ կազմակերպված մանկավարժական գործընթաց է՝ ուղղված երեխայի գեղագիտական ընկալումների, կյանքում և արվեստում գեղեցիկի վերաբերյալ պատկերացումների ձևավորմանը:

Կերպարվեստը թույլ է տալիս տեսնել շրջապատող աշխարհը գեղարվեստական տեսլականի պրիզմայով: Կերպարվեստի ժանրերը ներառում են նկարչություն, գրաֆիկա, քանդակագործություն, արվեստ և արհեստներ և արվեստի լուսանկարչություն:

Նկարչությունը ծնվել է մարդկության արշալույսին: Արվեստի այս տեսակը ներառում է քարանձավների պատերին հայտնաբերված ժայռապատկերներ: Նույնիսկ այն ժամանակ հնագույն նկարիչները ներկերի օգնությամբ փորձում էին պատկերին տալ եռաչափ: Նկարչությունը սկսեց ծաղկել միջնադարում. Կրոնի զարգացումը պահանջում էր սրբապատկերների առաջացում: Տոն դնող կրոնական նկարին զուգահեռ հայտնվում է նաև աշխարհիկ նկարչություն: Հիմնականում տարածվում էին թագավորների և ազնվականների դիմանկարներ: Հետագայում նկարչության մեջ առանձնացվեցին ևս մի քանի ժանրեր:

Նկարչությունը լայնորեն օգտագործվում է հոգեկան հիվանդների ստեղծագործական թերապիայում:

Գրաֆիկական աշխատանքները ստեղծվում են գծերի, լյուկերի և բծերի միջոցով: Որպես կանոն, պատկերը մատուցվում է սև գույնով: Նկարելու համար օգտագործվում են մատիտներ, ածուխ, թանաք, ինչպես նաեւ ջրաներկ, թանաք, գուաշ: Գրաֆիկան ներառում է տպագրություններ, վիմագրեր և փայտահատեր: Գրքերի մեջ վինետետների, էնդփայտերի և կաթիլների գլխիկների ձևավորումը նաև գրաֆիկական նկարչի աշխատանք է: Այս արվեստի ամենաերիտասարդ տեսակը քարոզչական պաստառներն են: Որոշ հետազոտողներ համակարգչային գրաֆիկան վերագրում են այս արվեստին. Դրանում պատկեր է ստեղծվում նաև գծերի և հավասարումների միջոցով, բայց հետագայում գույնը կարող է ավելացվել:

Քանդակագործների նպատակը մարդկային կերպարի իրատեսական եռաչափ պատկերն է: Տարբերակել կլոր և ռելիեֆային քանդակները: Առաջին տեսքը կարելի է տեսնել բոլոր կողմերից, իսկ երկրորդը ՝ հարթ ֆոնի վրա դուրս ցցված ռելիեֆ: Քանդակագործի աշխատանքը պահանջում է մեծ խնամք. Նախ վարպետը պատրաստում է ուրվագիծը, ապա կատարում հաշվարկներ, ապա պատրաստում կավի կամ մոմի նմուշ: Հիմնական աշխատանքը կատարվում է խստորեն ըստ

դասավորության: Եթե քանդակը բավականաչափ մեծ է, ապա նախ պատրաստվում են պողպատե շրջանակները, ապա ձուլվում են աշխատանքի մանրամասները:

Արվեստի շատ ձևեր միահյուսված են: Օրինակ ՝ նկարչությունը կապում է քանդակագործության, իսկ քանդակագործությունը ՝ ճարտարապետության և արվեստի ու արհեստների հետ:

Դեկորատիվ և կիրառական արվեստ ՝ ստեղծագործական իր բոլոր դրսևորումներով:

Դեկորատիվ և կիրառական արվեստը միավորում է արվեստի բազմաթիվ տեսակներ, որոնք մարմնավորում են գեղարվեստական և ուտիլիտար գործառույթներ: Սա ներառում է ասեղնագործություն, տրիկոտաժ, բշտիկագործություն, նորաձևության ձևավորում, զարդեր, բատիկա, ծածկոցներ և այլն: Դեկորատիվ և կիրառական արվեստի ժանրում արված գործերը ոչ միայն կատարում են գեղագիտական գործառույթ, այլև գործնական նպատակներ:

«Նատյուրմորտ» տերմինը գալիս է ֆրանսերեն բառից, որը բառացի նշանակում է «մահացած բնություն»:

Սրանք նկարներ են, որոնց հերոսները կենցաղային տարբեր իրեր են՝ մրգեր, ծաղիկներ կամ սնունդ (ձուկ, խաղող և այլն):

Նատյուրմորտները մեզ պատմում են ոչ միայն իրերի, այլև դրանց տերերի, նրանց կյանքի, ապրելակերպի և սովորությունների մասին:

Նատյուրմորտի հիմնական բնութագիրը կարելի է համարել նրա թվացյալ անպիտանությունը: Այնուամենայնիվ, սա փիլիսոփայական ժանր է, որը բոլոր ժամանակներում արտացոլում էր մարդու և արտաքին աշխարհի կապերը:

Նատյուրմորտների նախատիպերը կարելի է գտնել Պոմպեյի մոնումենտալ նկարում: Հետագայում այս ժանրը դարձավ այլ նկարների մաս: Օրինակ ՝ կրոնական նկարներ: Բայց դրա անունը հաստատվեց միայն 16 -րդ դարում:

Կերպարվեստը իրականությունն ու մարդու տեղը դրանում ճանաչելու միջոց է: Այն թույլ է տալիս վերստեղծել իրականությունը ՝ օգտագործելով տարբեր տեսողական պատկերներ: Այս արվեստի գործերը տեղ են գտնում ոչ միայն թանգարաններում կամ ցուցահանդեսներում, այլև քաղաքի փողոցներում, տներում և գրադարաններում, գրքերում և նույնիսկ ծրարներում: Նրանք մեր շուրջն են: Եվ ամենաքիչը, ինչ կարող ենք անել, սովորել գնահատել, հասկանալ և պահպանել այդ զարմանահրաշ ժառանգությունը, որը ժառանգել ենք անցյալ դարաշրջանների մեծ վարպետներից:

Մարդը միշտ ձգտել է գեղեցկության, ներդաշնակության և ինքնարտահայտման: Հին ժամանակներից ի վեր այս ցանկությունը դրսևորվում է նկարչություն- կերպարվեստի մի ձև, որի առաջին գործերը կարող ենք գտնել պարզունակ մարդու ստեղծագործություններում:

Նկարչություն փոխանցում է տեսողական պատկերներ՝ ներկերը քսելով ամուր կամ ճկուն հիմքի վրա (կտավ, փայտ, թուղթ, ստվարաթուղթ):

Կախված օգտագործվող ներկերից և նյութերից, հիմքերը տարբերվում են բազմազանությամբ.

Նրանց մեջ:

կարագ;

տեմպերա;

էմալ;

գուաշ;

պաստել;

թանաք;

գաջի վրա նկարչություն. որմնանկար և սեկկո;

ջրաներկ;

չոր խոզանակ;

ակրիլ;

և շատ ուրիշներ:

Գոյություն ունեն նկարչության շատ մեծ տեխնիկա: Ամեն ինչ, ինչ -որ բանի վրա որևէ հետք է թողնում, խստորեն ասած, նկարչությունն է. Նկարչությունը ստեղծված է բնության, ժամանակի և մարդու կողմից:

Գույնը գեղանկարչության մեջարտահայտման ամենակարևոր միջոցներից է: Նա ինքը կարող է լինել որոշակի գաղափարի կրող, բացի այդ, նա կարող է բազմապատկել նկարի սյուժեին բնորոշ միտքը:

Նկարչությունը կարող է մեր մեջ արթնացնել զգացմունքների և զգացմունքների լայն տեսականի: Խորհելով ՝ կարող ես լցված լինել ներդաշնակության և խաղաղության զգացումով, ազատվել սթրեսից եւ ընկղմվել մտքերի մեջ, կարող ես էներգիա ստանալ և քո երազանքներն իրականություն դարձնելու կամք ձեռք բերել: Հուզականորեն մոտ նկարը կարող է ժամեր շարունակ պահել ուշադրությունը, և նման նկարի սեփականատերը ամեն անգամ դրա մեջ կգտնի նկարչի նոր իմաստներ, գաղափարներ և ուղերձներ: Խորհելը մեդիտացիայի մի ձև է, որտեղ

դուք ընկղմվում եք ձեր ներքին աշխարհում և շատ անհրաժեշտ ժամանակ անցկացնում միայնակ ձեզ հետ:

Բացի այդ, նկարչություն ինչպես ցանկացած այլ արվեստի ձև, օգնում է արտահայտվել, ձեր հույզերն ու տրամադրությունը, ազատում են սթրեսից և ներքին լարվածությունից և երբեմն գտնում են կարևոր հարցերի պատասխաններ:

Շատերի համար նկարչությունը դառնում է ոչ միայն հաճելի զբաղմունք, այլև օգտակար զբաղմունք, որը բարենպաստ ազդեցություն է ունենում ներքին վիճակի վրա: Ստեղծելով նոր բան՝ մարդը բացահայտում է իր ներուժը, գիտակցում իր ստեղծագործական ունակությունները, ճանաչում է իրեն և իրեն շրջապատող աշխարհը:

Ժամանակակից հանրակրթական դպրոցում յուրաքանչյուր ուսումնական բնագավառում ուսումնական գործունեության տեսակները նախագծելիս պետք է նկատի ունենալ ոչ միայն տվյալ առարկայի գծով գիտելիքների հաղորդման, այլև սովորողի մեջ նշված հատկանիշների ձևավորման և զարգացման անհրաժեշտությունը: Իր յուրահատկության, բովանդակության, ինչպես նաև ուսումնական բոլոր առարկաների հետ փոխադարձ կապ ստեղծելու բացառիկ հնարավորության շնորհիվ, կերպարվեստը կոչված է խթանելու սովորողների մտավոր և հոգևոր ներուժի բացահայտումը, զարգացումը և հարստացումը, ընդհանուր աշխարհայացքի ձևավորումը: Կերպարվեստի տարբեր տեսակներին հաղորդակցվելը և ինքնուրույն գեղարվեստական գործունեություն իրականացնելը նպաստում է՝

- Իրականության գիտակցական և զգայական ընկալման ձևավորմանը.
- Վերլուծական և ստեղծագործական մտածողության զարգացմանը.
- Անձի ինքնաճանաչմանը, ինքնաարտահայտմանը և մտահորիզոնի ընդլայնմանը.
- Սովորողների գեղարվեստական կրթությանը, գեղագիտական և բարոյական դաստիարակությանը.
- Ազգային-հայրենասիրական և մարդասիրական զգացումների արմատավորմանը:

Աշակերտը պետք է կարողանա

- Ստանալ ծավալային և հարթ պատկերներ:
- Ցուցադրել տարբեր նյութերով և միջոցներով ստեղծագործական մտքի հաղորդման հմտություններ:
- Ստանալ ավարտուն ծավալային և հարթ պատկերներ:

- Ստեղծել կրկնօրինակներ:
- Փորձարկել նյութերը և գործիքները:
- Ցուցադրել ստեղծագործական գաղափարը զարգացնելու, մշակելու և ավարտին հասցնելու համար անհրաժեշտ են տարբեր մեթոդների, գեղարվեստական նյութերի, գործիքների, կերպարվեստի տարրերի և դիզայնի սկզբունքների իմացություն: Անվանել նյութերն ու գործիքները:
- Ներկայացնել իր և ընկերների աշխատանքները՝ օգտագործելով մասնագիտական բառապաշար:
- Համեմատել պատկերները:
- Նյութերն օգտագործել մտածված և խնայողաբար: Աշխատանքն ավարելուց հետո կարգի բերել տարածքը:
- Ստանալ ճանաչելի հարթ և ծավալային պատկերներ ու հորինվածքներ՝ ապահովելով ծավալ, տոն, տարածություն, ռիթմ և ամբողջականություն:
- Կիրառել գուներանգները աշխանանքներին հուզականություն հաղորդելու համար:
- Ստեղծել հորինվածքներ, գաղափարներն արտահայտելով կերպարվեստի տարրերի ու սկզբունքների կիրառմամբ:
- Կատարել հայտնի ստեղծագործությունների կրկնօրինակներ՝ կերպարվեստի տարրերն ու սկզբունքներն առավել արտահայտիչ ներկայացնելով:
- Բանավոր կամ գրավոր մեկնաբանել և թվարկել կերպարվեստի տարրերն ու սկզբունքներն առաջարկված ստեղծագործություններում, դրանց ազդեցությունն ու նշանակությունը հիմնական գաղափարի վրա:

Ստեղծել երևակայության և զգացմունքների վրա հիմնված աշխատանքներ, որոնք արտահայտում են տրամադրություն, զգացմունք կամ անձնապես կրած հուզական վերաբերմունք:

Կառավաջիոյի ազդեցությունը նկատելի է նաև իսպանական նատյուրմորտներում, սակայն դրանք առանձնանում են վսեմ խստությամբ և նշանակալիությամբ: Հոլանդական նատյուրմորտը առաջացել է 17- րդ դարում միավորելով նախաճաշ, անուշեղեն, ձկներ, ծաղիկներ և մրգեր, խփված որս, այլաբանական՝ ունայնություն ունայնության (vanitas) :

Ֆլամանդական նատյուրմորտը պատկերում է շուկաներ, կրպակներ, ծաղիկներ և մրգեր։ Աչքի է ընկնում հորինվածքի հզոր թափով, պտղաբերության . առատության հզոր գովերգ է։

Նատյուրմորտը 17-րդ դարից զարգանում է Ֆրանսիայում և Գերմանիայում։ Ֆրանսիայում էլ կոչվել է նատյուրմորտ - մեռած բնություն, ընդգծված հակադրվելով ակադեմիստների արհամարհական վերաբերմունքին, որոնք ընդունում էին միայն կենդանի բնությունը (պատմական ժանր, դիմանկար)։

Նատուրմորտ են անվանում մարդուն շրջապատող իրերը պատկերով նկարները։ Նատուրմորտի մեծագույն վարպետն էր Մարտիրոս Սարյանը։ Հայ գեղանկարչության մեջ բարձրարվեստ ու ինքնատիպ նատուրմորտներ են ստեղծել նաև Զ. Զաքարյան , Հ.Կոջորյանը Հ.Զարդարյանը Հ .Կալենտը Մ Ավետիսյանը և շատ ուրիշներ։

Եզրակացություն

Կերպարվեստը ինքնին տարածական է: Այսինքն, այն ունի օբյեկտիվ ձեւ, որը ժամանակի ընթացքում չի փոխվում: Եվ հենց այս ձևի տեսքով են առանձնանում կերպարվեստի տեսակները:

Նրանք կարող են բաժանվել մի քանի կատեգորիաների: Օրինակ, ըստ արտաքին տեսքի: Մինչև 19 -րդ դարը հիմնական տեսակները համարվում էին ընդամենը երեքը՝ քանդակագործությունը, գեղանկարչությունը և ճարտարապետությունը: Բայց տեսողական արվեստների պատմությունը զարգացավ, և շուտով նրանց միացավ գրաֆիկան: Հետագայում հայտնվեցին ուրիշներ ՝ արվեստ և արհեստ, թատերական և դեկորատիվ, դիզայն և այլն:

Նատյուրմորտը հիմնականում նաև գեղանկարչության ժանր է: Նրա անունը ֆրանսերենից թարգմանվում է որպես «մահացած բնություն»: Իրականում նատյուրմորտների հերոսները տարբեր անշունչ առարկաներ են: Սովորաբար դրանք ամենօրյա իրեր են, ինչպես նաև բանջարեղեն, մրգեր և ծաղիկներ:

Մինչ օրս ընդհանուր կարծիք չկա, թե կերպարվեստի որ տեսակներն են պետք առանձնացնել: Բայց կան մի քանի հիմնական, որոնց գոյությունը ոչ մի հակասություն չի առաջացնում:

Նատյուրմորտը կերպարվեստի ժանր է հիմնականում հաստոցային գեղանկարում, որտեղ պատկերվում է անշարժ, անշունչ առարկաներ՝ սովորաբար տնային կահկարասի, մրգեր, ծաղիկներ, ձկներ, խփված վայրի թռչուններ, որևէ մասնագիտության պիտույքներ:

Գծանկարը վիզուալ արվեստի տեսակ է, որի միջոցով պատկերները փոխանցվում են ներկերի միջոցով: Դրանք կիրառվում են կոշտ մակերևույթի վրա ՝կտավ, ապակի, թուղթ, քար և շատ ավելին:

Նկարչության համար օգտագործվում են տարբեր գույներ: Դրանք կարող են լինել յուղ և ջրաներկ, սիլիկատ և կերամիկա: Միեւնույն ժամանակ, կա մոմ նկարչություն, էմալ եւ այլն: Դա կախված է նրանից, թե ինչ նյութեր են կիրառվում մակերեսի վրա և ինչպես են դրանք ամրագրվում այնտեղ:

Գեղանկարչության մեջ կա երկու ուղղություն ՝ մոլբեթային և մոնումենտալ: Առաջինը իր մեջ միավորում է բոլոր այն աշխատանքները, որոնք ստեղծվում են տարբեր կտավների վրա: Նրա անունը գալիս է «մեքենա» բառից, որը նշանակում է մոլբերտ: Բայց մոնումենտալ նկարչությունը կերպարվեստ է, որը վերարտադրվում է տարբեր ճարտարապետական կառույցների վրա: Սրանք բոլոր տեսակի տաճարներ են, ամրոցներ, եկեղեցիներ:

Վարպետի գրիչից, մուրճից կամ մատիտից դուրս եկող յուրաքանչյուր կտոր նվիրված է որոշակի թեմայի: Ի վերջո, ստեղծելով այն, ստեղծողը ցանկանում էր փոխանցել իր մտքերը, զգացմունքները կամ նույնիսկ սյուժեն: Հենց այս հատկանիշների համար են առանձնանում կերպարվեստի ժանրերը:

Առաջին անգամ հսկայական քանակությամբ մշակութային ժառանգության ցանկացած համակարգման մասին մտածվեց Նիդեռլանդներում 16 -րդ դարում: Այս պահին առանձնանում էին ընդամենը երկու կատեգորիա ՝ բարձր և ցածր ժանրեր: Առաջինը ներառում էր այն ամենը, ինչը նպաստում էր մարդու հոգևոր հարստացմանը: Դրանք առասպելներին, կրոնին, պատմական իրադարձություններին նվիրված աշխատանքներ էին: Իսկ երկրորդին ՝առօրյա կյանքին վերաբերող բաներ: Սրանք մարդիկ են, առարկաները, բնությունը:

Շատերի համար նկարչությունը դառնում է ոչ միայն հաճելի զբաղմունք, այլև օգտակար զբաղմունք, որը բարենպաստ ազդեցություն է ունենում ներքին վիճակի վրա: Ստեղծելով նոր բան ՝ մարդը բացահայտում է իր ներուժը, գիտակցում իր ստեղծագործական ունակությունները, ճանաչում է իրեն ու աշխարհը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Langmuir, Erica, Still Life, 2001, National Gallery (London), 1857099613
2. Ebert-Schifferer, Sybille. Still Life: A History, Harry N. Abrams, New York, 1998, 0-8109-4190-2
3. Հայկական Սովետական Հանրագիտարան, Երևան, 1982, հատոր 8, էջ197-198
4. Նախաշավիղ ամսագիր
5. Ղազարյան Մ., Հայ կերպարվեստը XVII - XVIII դարերում, գեղանկարչություն Ե., 1974:
6. Дурново Л. А., Краткая история древнеармянской живописи, Е., 1957;
7. Каменский А. А., Зрителю о живописи, М., 1959;
8. Измайлова Т. А., Айвазян М. А., Искусство Армении, М., 1962;
9. Недошивин Г. А., Беседы о живописи, 2 изд., перераб., М., 1964;
10. «Հանրակրթության պետական չափորոշիչ», 2010 թ.
11. COMPETENCES FOR DEMOCRATIC CULTURE (CDC), ձեռնարկ, ԵԽ, 2018 թ.,
12. Բորև, Գեղագիտություն, «Հայաստան», 1982թ.:
13. Գեղագիտական դաստիարակություն «Լույս», 1975թ.:
14. Ա. Բալյան-Դպրոցականների գեղագիտական դաստիարակություն «Լույս», Երևան, 1979թ.: